Ամպոց նմանեալ թեթևագնաց եղ
եալ, ով սբ̃ հայր անտոնն և.
Թռչնոց նմանեալ ևբանաւոր ծիծ
ռանց, ով սբ̃ հայր անտոնն և.
Փօշից նմանեալ սպիտակազգեստ
ստևով, ով սբ̃ հայր ան.
'ի ծերպս վիմաց դու ջահ լուսոյ լու
ցեալ, ով սբ̃ հայր ան.
Միանձնացելոց ըն վեհագոյն
գտար, ով սբ̃ հայր ան.
Հրեշտականմանից դու հեղինակ
եղեր, ով սբ̃ հայր ան.
Ըզվարս անարատս դու ուսուցերնո
ցա, ով սբ̃ հայր ան.
Զբաղումս որսայեր խմեղսասէր
մարմնոյ, ևընծայեցեր տ̃ն ա̃յ նոր
երս.
Արդ լեր բարեխօս առ տ̃ր ըն մերյ̃,
փրկել 'ի մեղաց զտօնօղս ըզտօն քո
սբ̃.

Տաղ

Տաղ առաքելոց և մարգարէից.

Գաղըստանոց ամծածնին, անապական և միշտ կուսին, Եւ յոհաննու կարապետին, յանապատէ թարբառ ձայնին.

Առաքելոց մաքուր դասին, մարգարէիցն որք առաջին, Որք զհոսանս հոգւոյդ արբին, և ընդ հանուր մեզ արբուցին.

Աշակերտաց գերագունին, եկեղեցւոյ անշարժ վիմին, Եւ անօթոյ ընտրեալ բանին, անձառելեաց տեսանողին.

Մաքուր որդւոյն զեբեթին. որք՝ի վերուստ որոտային, Եւ անդրէն քում խաչակցին, ևմատթէի քարոզ բանին.

Փիլիպպոսի զհայր հարցողին, բարդուղիմեայ զմեզ կոչողին, Յակոբոսի

մակալփէնին , և թումայի երկոր-
կին .

Նախանձայոյզ շմաւոնին , և յակո-
բայ ընդ յուդային , Եւ ըստ անուան
եղբօր քոյին , արդար անուն աշակեր-
տին .

Եօթանց սրբոց զորս ընտրեցին, սար-
կաւագաց փոքուհօտին , Որ և նախ-
կի պարուց դասին , պսակ անունն է
ընդ նոսին .

Եւ քում ընտրեալ եօթանասնին ,
աշակերտաց քարոզբանին , Եւ որք
նոցայն հետևեցին , իւրաքանչ իւր
ժամանակին .

## Տաղ առաւօտեան .

Ցնծան տիեզերք խնդու-
թէ՟ , և հրձուին երկինք
գովութէ՟ , առաքելոց
զփառս օրհնութէ՟, ամ
տեղք ընդ տարերց ներ
բողեն .

Զձեզ

Զձեզ յաւիտենից դատաւորս, և
բանին կենաց սպասաւորս, ուխտիւք
պաղատիմք յանցաւորքս, զօժան
դակութի հայցելով.

Ո՛րք բանայք բանիւ զդրունս երկնից,
և շնորհէք ըզ մուտ բնաւից, ըզ մեզ
մեղուցեալքս 'ի կապից, լուծէք գթու
թբ աղերսեմք.

Զերոց հրամանաց հզօրից, հնազան
դին համայնք ցաւք սրտից, փրկեցէք
ըզ մեզ 'ի յախտից, ըզ վարըս բարիս
շնորհելով.

Զի 'ի գալ մերոյ կենսատուին, կեն
ցաղոյս յաւուր ըն վերջին, ըզ մեզ
անդրանկաց ըն մասին, հաղորդս
առնիցէ պսակելով.

Հօր և որդւոյ միահաղոյն, և հոգւոյն
սրբոյ գոհութի, պատիւ և երկրպա
գութի, միշտ և յապագայ յաւի
տեան.

## Տաղ մարտիրոսաց.

Անմահ արքայդ Նահատակաց, բախտ եւ պսակ ըդ զինուորաց, զտօնս խմբուս մարտիրոսաց, զերծո՛ 'ի կապից յանցանաց.

Դու փառք 'ի քեզ յուսացողաց, զանուն քո սէ̃ կարդացողաց, 'ի յերկրայնոց հրաժարողաց, և 'ի սէր քո մեռանողաց.

Լուր մեզ առ քեզ պաղատողաց, զտօն ըս սրբոյ քոց տօնողաց, որք ըղ տանջանս անօրինաց, կրեցին առանց զանգիտանաց.

Համդուրժելով չարչարանաց, դիւաբախից բռնաւորաց, ոչ երկուցեալք 'ի սպառնալեաց, հրոյ եւ ժանից ըն գազանաց.

'ի յանձն առին ըղ խոց վիրաց, զհա

տուՙն ոտից այլ և ձեռաց , հեղմամբ
արեանց պատուականաց , ստացան
ըզ փառս ըս պարծանաց .
Սոցին արդեամբք մեղաւորացս ,
լինայեմ գթած տ̅ր ըդ փառաց ,
դասակցելով ընդ երջանաց , և զերկ
նայինս վայելողաց .

## Տաղ Հայրապետաց

Հայրապետաց համօրէնց
ազգին , վարդապետաց
ուղիղ բանին , որ զքեզ
որդի հօր միածին , խոս
տովանիլ մեզ ուսուցին ,
Սպասաւորաց ս̅բ խորհրդոյն , յին
նեան դասուց եկեղեցւոյն , համա
նմանեաց վերնագունից , փառատրո
ղացն անձանցն երից .
Նա և նոցունց որք են յերկինս , հայց
մամբն ուղղեմ զիս մոլեգինս , որք
և վ̅ս իմ քեզ պաղատին , անտես չառ

նել զգործ ըս ձեռին .

## Տաղ հայրապետաց .

Քաջ հովիւք զուարթունք ընտրեցեալք , և մշակք փրկչին սխրացեալք , ձերով արդեամբք զուարճացեալք , տօնեմք զհանդէս ձեր ցնծութեամբ .

Որք առիք ըզ շնորհս երկնայինս , հովուել ըզ հօտս ա̅ծայինս, զմեր ըս տկարութիս մարդկայինս , ձերով ազդմամբ կազդուրեցէք .

Զատագովք սրբոյ հաւատոյն , հիմունք հաստատք եկեղեցւոյն , զփոյթ ունելով ձերոյ այգոյն, պահել մնզթեմք զմեզ անվնաս .

Վարուք ձերովք անախտելեօք, և սրբանեցելովք շաւղօք , իբր ըզ վարժիչս օրինակօք , լուսաւորեցէք ըզ

ըզ

ըզ հանուրս ։
Անշէջ լապտերք լուցեալք յերկնից, եւ լուսատուք քրիստոնէից, քաջ առաջնորդք մերոյ շաւղից, ուղղեցէք զմիտըս մ՚թացեալս ։
Մեզ տօնողաց ներպաստեցէք, եւ առաջնորդեցէ՛ք, քաւել զյանցանս աղերսեցէք, եւ շնորհաց մասնակցեցէք ։

Տաղ Ճգնաւորաց ։

Ճգնաւորօքն անմարմնատին, հետեւողաց կենաց ձայնին, տուր ինձ թողուլ զսէր աշխարհի, վառիլ սիրով քո երկնային ։
Եւ բարձողաց ուսով խաչին, մեռանել ըստ աշխարհին, եւ քո զկնի ընթացողին, զգնացս ուղեա իմոյ ոտին ։
Պաղատանօք մեծ անտռնին, հեղի

նակի

նակի մբ երամին , նոյք նովաւ յայս
կարգ եկին, մինչև այժմոյս նորք լի
նին .

Զանազանեալ վարուք նոցին, և ծաղ
կերանգ քեզ ընծային , շնորհեա՛
փոխիլ անբերս անձին , ըստ պտղա
բեր քոյոյ տնկին .

Որք աղօթից ըզ շնորհս առին , և ար
տասուաց զյորդ վտակին , ձգեա՛
զգիս հայցմամբ նոցին , թէ և հեղ
գամ՚ ի նոյն բարին .

Եւ որք պահօք ըն մեռուցին , զախտ
ըս մարմնոյ սկզբնաչարին, տուր ինձ
նոքօք առ ցանկալին , սանձել ըզ
կիրս որովայնին .

Որք խորհրդովք ընյաղթեցին , պո
ռնկական պատերազմին ; տուր յաղ
թութի ծուլիս անձին , գոն է լրման
գործոց չարին .

## Տաղ կուսանաց .

Կոյսք ըն մաքուր թագիւ պճնին , որք փեսայիդ ըսպասեցին , աբեգա կանոնման ծագին, փայլէն հանգոյն արուսեակին .

Դէսպէս փառօք զանազանին, ըստ աստեղայն որք էն յերկնի, իւրաքանչ իւր արդար մասին , առ ցէն 'ի քէն զոր գործեցին .

Ամուսնացեալքն ըստ օրինին , և ծնողքն որք առ անձին , և նմ որք ըստ կարգին , զիւրոյ անձին զոր ծեալբարին .

Իբրև ծաղիկքեզ ընծային , 'ի հոտ անուշ և երկնային , ոմն զաղօթ ըս մբ սրտին , եզարտասուս որ միշտ հեղին .

Այլ ոմն ըղ սէրն ածային , նոր եղ

բարսն

բարսնէ ըստ անձին, ոմն ըզ հըր
կուռն գիշերին, և ըզ կանխումն ա
ռաւօտին.
Ոմն ըզ պահոց ըզ պնդութի, ըզ կե
րակրին և ըզ լեզուին, ոմն զաւաս
տուրս աղքատին, զոր ընդունեիս ձե
ռամբ նորին.
Ոմն ըզ բաժակ ըն ցուրտ ջրին, զոր
սասացեր թէ ոչ կորին, ոմն ըզ խնդալն
ընդ խնդալին, և զարտասուելն ընդ
արտասուեին.

## Տաղ 'ի վճարման պատարագին;

ԱՆՁՆիմ յամ ժամ 'ի տր
պարծեսցի, լուեալ
դասն հեզոց յոյժ ուրա
խասցի, Մեծարարէք
ընդ իս ըզտրն ամենի,
և զնը անունն նր միշտ
բարձր եղիցի.
'ի տէնէ խնդրեցի և լուաւ ձայնի, փր

կեաց

կեաց 'ի Նեղութ՟եց զխսյ՟մի, Մեր
ձեցարուք 'ի տ՟ր 'ի լոյսն բարի, երեսք
ձեր յաւիտեան մի ամօթ լիցի.

Այս աղքատիկս որ միշտ առ ա՟ծ կար
դաց, նա փրկեաց զսա յ՟ամ վշտաց,
Զի շուրջ զերկիւղածովք բանակք
հրեշտակաց, պահել 'ի փորձանաց
նյայսոց չարաց.

Ճաշակեցէք զի քաղցր է տ՟րն ամենից
նորքյուսան 'ի նա էն երանելի, իսկ
որ զերկիւղ ըն տ՟ն ունի 'ի սրտի, պա
կասութ՟ի բարեաց նա մի ունիցի.

Զի մեծութ՟ի ընչիցն ունայն նսուտ
է, փութով աղքատանայ սովն զնա
լ՟կէ, Բայց որ սրտի մտօք զա՟ծ միշտ
խնդրէ, պակասութ՟ի բարեաց նա ոչ
տեսանէ.

Եկայք առ իս որդեակք նինձ լուա
րուք, զահ նզերկիւղն տ՟ն յինէն ու
սարուք, Երիտասարդք նծերք նա՟մօք
սիրէք զաւուրս ձեր տեսնել բարւոք.
Զլեզու քո լռեցո 'ի չարութ՟է, շր
թունք

Թունք քո զգուշասցին 'ի նենգութէ փախիր դու 'ի չարէն զբարին կատարէ, գնա՛ զհետ ջիրոյ որ միշտ խաղաղէ.

Տր̅ 'ի վր̅ սրբոց քաղցրահայեաց է, և աղօթից նոցա վաղվաղեալ լսէ, Երեսք տն̅ 'ի վր̅ չարագործաց է, ըղ յիշատակ նոցա ջնջել 'ի յերկրէ.

Կարդացին արդարքն առ տր̅ և լուանոցա, փրկեաց 'ի զանազան փորձանաց զնս̅, որք են մաշեալ սրտիւք տր̅ մերձէ նոցա, և զխոնարհն հոգւով կեցուսցանէ նա.

Նեղութիք արդարոց ըն̅ յոյժ բազումէ, այլ տր̅ ինքնին փրկէ 'ի յամ̅, Եւ զամ̅ ոսկերսն անարատ պահէ, զի մի 'ի նոցանէ ոչոք կորիցէ.

Մահն մեղաւորին դառն և յոյժ չարէ, իսկ որ զարդարն ատէ սատանան զեղջ է, Զանձինս ծառայից իւրոց տր̅ փրկէ, և որ յուսայ 'ի նա անզեղջ մնասցէ.



## Տաղ վ̃ ջրոց առուաց.

Այդ վայրի լեռնեդ խվայր ջուրն 'ի շինուդ մէջն անցանէր հայ. Թուխ մանուկ մի դուրս ելեր ձեռքն ու զերեսն էր լուացեր հայ. լուացեր այ լուացեր դարձեր 'ի ջուրն հարցմունք արեր հայ.

Ջուր դու 'ի յոր լեռնէն կուգաս իմ պաղուկ ջրիկ սանուշիկ հայ. Ես 'ի յայն լեռնէն կու գամ որ հին ու նոր ձիւն կայ վերան հայ.

Ջուր դու 'ի յոր առուն կերթաս իմ պաղուկ ջրիկ սանուշիկ հայ. Ես 'ի

յայն առուն կերթամ ուր փունձն
շատ է մանուշկին հա՛յ.
Ջուր դու 'ի յոր այգի կերթաս իմ
պաղուկ ջրիկ սանուշիկ հա՛յ. ես 'ի
յայն այգին կերթամ որ տէրն 'ի մէջն
է այգեպան հա՛յ.
Ջուր դու 'վ յոր տունկ կու գնաս իմ
պաղուկ ջրիկ սանուշիկ հա՛յ. ես 'ի
յայն տունկ կուգնամ որ տակն խոտ
բերէ գառին հայ.
Ջուր դու 'ի յոր պարտէզ կերթաս
իմ պաղուկ ջրիկ սանուշիկ հա՛յ. ես
'ի յայն պարտէզն երթամ ուր հաւք
երկնից եղանակէն հայ.
Ջուր դու 'ի յոր աղբիւր կերթաս իմ
պաղուկ ջրիկ սանուշիկ հա՛յ. ես 'ի
յայն աղբիւրն երթամ ուր սիրելին
գայ զովանայ հա՛յ, փութացիր եւ
ընդ առ աջ 'ի կեղ նորին զուարճա
ցիր հայ.

Տաղ

## Տաղ խաղողի և գինւոյ.

Այն առաջին ժամանակին, որ զպտղաբերքն տնկեցին, յառաջ զխաղողն գովեցին, և տրտմութեն դեղ կոչեցին, այ լից ու տուր, այ լից ու տուր, լից ու տուր զանուշ գինին որ է բաժակ անապական.

Պատեալ զայգին բոլորեցին, պայծառ ծաղկօք զարդարեցին, ամէն պտղօք զնա լցին, և յետ նորա զգովքն ասացին, այ լից.

Քո պատերդ է ողջ վարդենի, բոլորն ամէն արմաւենի, քո ծառ ու տունկդ ենշենի, պտուղ բերէ քաղցրու բարի այ լից.

Քո ուռերդ է եղեր շիտակ, երկայն և ձիգ զերդ բարունակ, ճուղք արձակեր հաստու բարակ, խաղողն ՚ի

կախս սև ու սպիտակ, այ լից.

Քո ճղերդ է միշտ 'ի կանգուն օղկոյ զըն մէծ ևփոքրադոյն, պտուղդ ի կախ դէմ արևունըս զերդ զկանթեղ մէջ գիշերոյն. այ լից.

Երբոր աշունն մօտենայ, այգետիր էրն էլնէն ու գան, աջոյ ձեռին սուր նդանակ. ձախոյ կողմանն կթոց քաղլակ. այ լից.

Ըղքեղքաղէն ձգէն հնձան, մնտի ծմլէն լնուն յաման, ըղքեղ խբէն սյլվի բանան, բաժակ առնէն անուշահամ. այ լից.

Յամ գիւղ և 'ի քաղաք, քէնով ուրախ կէնան էրագ, շատ խռովներ հաշտեցնես, շատ սիրելիք կուվեցնես, այ լից.

Սարկաւագներն լսեցին, սաղմոսել ով էլին էկին, ըղքեղ ինկօք մեծարեցին, առէալ տարան յեկեղեցին, այ լից.

Այլ և 'ի վէր մեծարեցին, վերայ բե

մին

մին բազմեցուցին, ըստ դրին մէ
սեղանին, ի ձեռն օրհնեալ քահան
ային, այլն.
Բաժանել զնիս կենդանութե, քանիչ
մեղաց ազգի մարդկան, տն քի մարդ
եղութե փառք նպատիւ այժմ յաւի
տեան, այլն.

## Տաղ զղջման.

Մարախլօրէն շուրջանա
կի պար առին զգերիս,
պար առին զ.երիս,
միտքս խաբեալ նվարա
նեալ ապշեցաւ, վայ
նեղուկ իմում անձին
Ճար չունիմ.
Խորհուրդք մահու նխաւարին պա
տեցին զինև, պատեցին զինև, վէ
րուստ իվայր ստորահակեալ քարշե
ցին, վայ նեղուկ.
Ի ցանկութեց այս կենցաղոյս հե

տացայ մեղօք հեշտացայ մեղօք ,
սաստիկ հրոյն այրման բոցոյն հոգ
չարի , վայ ևեղ .

Թուլացեայ յախտս ջողմին չկարա
ցի սթափիլ , չկարացի սթափիլ , արա
ռեցի զամբիծ հոգիս պատրանօք
վայ և .

Արդ մինչ մահու օրն հասանի յո՛
փախեայց գերիս , յո փախեայց գե
րիս , ոչ 'ի յերկինս և ոչ ստորինս զեր
ծանիմ . վայ և .

Րոտմամբ սրտիւ և հառաչմամբ պա
ղատիմ գերիս պաղատիմ գերիս ,
պատմեմ զ յանցանսիմ ակամայ եղկե
լիս , վայ ևեղ .

Տաղ վն̅ Թռչնոյ .

Տէր յովհաննէս հոգւով
տկար , և վարդապետ
յերկիր օտար , կամիմ
գովել զհաւքերն հաւ
սար , ուրախութե̅
մարդ

մարդկան համար հայ.

Արմասըն մեծ էր սանյարմար էր
Թայր ծովուն յատակն իվայր, մեծ
փայտ առնէր ևբարձրանայր. ըիբա
նանու ըեռնէն 'ի վայր, հայ.

Անկղն խեղօք էր ևխիկար, նա ըզ
մեռ եալ մարդն իմանայր, ովոր 'ի նա
կու հոտոտայր, ընոյր զքիմն ևզովա
նայր հայ.

Արօան մեծ էր զերդ ոչխար, զօլն 'ի
դաշտերն 'ի շուրջ կու գայր, երբոր
թուչերնա ցած կերթայր, զերդ գէր
մարդու հեքն կուգայր հայ.

Սագն 'ի յարօտ երթայր ու գայր,
զերդ ըզ պախրէ եկամ զոչխար, սղոց
ունէր իբր զխիզար ' զգողն և զշտար
մարդն իմանայր հայ.

Սիրամարգ հաւն էր սնափառ
գլխին ունէր փետուր պայծառ, որք
ծօծային իբր ըզ գօհար, ոսկիաձոյլ
մարգարտաշար հայ.

Ագին նշարմիր կանանչ գուն տայր,

քա՛ն զե՛րկնային գօտի՛ն կամար, փե-
տու՛րն ամե՛ն զմրուխթ ու լալ, ի՛գո՛ն
ոսկւոյ արծաթափայլ հայ.
կուրծքն ու շլիքն էր դար 'ի վայր,
լուրջ ու կապուտ ծիրանափայլ,
թևերն ամէն ակնու կու հար, զէրթ
արեգակն փայլ կու տայր հայ.
Կռ ունկն մեծ է զէրդ ոչխար, բարձր
թռչէր և ձայն կու տայր, էրբոր
ձմեռն մօտէնայր, շուտով անէր
փախչելու ճար հայ.
Մարի հաւուկն էր խիստ խիկար, յօր
մէջն մէկ հաւկիթ կու տայր, զէրթ
զկաքաւ կու կրկչայր, զկուտն կու
տէր նյագէնայր հայ.
Ջաւալասանն էր խիստ արդար,
ինքն 'ի դաւթի սաղմոսն կայր, զօրն
յանապատն կու կենայր, օրինակէր
գք̅ն ճարտար հայ.
Աղաւնին ոսկեփետուր, քան զա̅մ
հաւերն արդար, նորա կա[illegible]
երամս հազար, և միամիտ, ծրթան

'ի

՚ի շար հայ.

Քշտռեմուխ հաւուկ մի կայր, կռնակն ըղտու յարմարանայր զիւր ձուն կախէն յամէն տաճար, իւր ծիրտն յալմաս երկաթն կայր, հայ.

Կռակամն կախ ՚ի ծառն ֆվայր. յա չիյն արիւն կու կաթէնայր, մէկ մի չիկայր առնոյր ՚ի վայր, նա շատ կանչէր անգէնէ հար. հայ.

Ֆիվ՛ն ՚ի մորին մասխարանայր, ՚ի ճղէ ճիւղ կուպորտքայր, զերդ զուլ կանչէր զերդ տղայ լայր, ամէն մար դոյ բանիւ լինայր հայ.

Չինկուլին պիտի խղճալ, վիզն բա րակ անձն է նիհար, զօրն ՚ի գետերն ՚ի շուրջ կու գայր, ամէնըն մէկ ձկան համար հայ.

Շնորօրն զերթ տղայ լայր, զերթ գլակոտ մղնձկտայր, յանձն հագեր կարմիր կապայ, և ՚ի ներքուստ դե ղին աստառ.

Արագիլն մեծ հաւ ու հով, երկայն

ու բարակ ձվերով, յերկնիցն 'ի վայր
գայր խաղալով, օձ կու խլէր վեր
քարշելով հայ.

Կաչաղակն կրկչայր, իվէր վազէր
հպարտանայր, թէ իմ սև ու սպիտակ
փետուրս, ագիսքան զայլ հաւուցն
երկուս հայ.

Կեռ կտուց հաւուկ մի կայր, հագէր
կապուտ կու պարծենայր, թէ զայդ
հաւերդ որ գովեցիր, զերդ զիմ փե
տուրս մէկ մի չիկայր հայ.

Տատրակն ամբիծ ւաղօթարար,
զճաշու ժամն ասէր յերկար, յանձն է
հագեր սպիտակ շուռջառ, զերդ
քահանայ հանդարտաբար հայ.

Կով կորուսիկն էր քոյր ւեղբայր,
կովն կորեր 'ի շուրջ կու գայր, քու
րիկն ասէ կովն գտար, եղբայրն ասէ
ճարակ չկայր հայ.

Ծիծեռնիկն գայր շինէր, զիւր հայ
րենի տուն ւտաճար. նիվր այն տա
ճարին սաղմոս ասէր զօրն անդա

դար հայ ։
Ջօփօփիկն էր զարդարվէր, գլուխն
դրէր թագ ու կատար, ինքն յերկար
յէզր 'ի շէնին , կամ քաղաքայ պա
րիսպ կէնայր հայ.
Ծիտն 'ի շէնի միշտ կու կէնայր, յա
մէն պատէ ձայնն կուգայր, ինքն տա
րօք ապրի հաղար, եզուգակցի զօրն
անդադար. հայ.
Ջէրդ խօրօզիկն մէկ մի կայր, զօրն
'ի փողոցն 'ի շուրջ կուգայր, թէթէկ
կանէր զօրն ճարտար, պսակ դրամ
փող մի չի կայր, հայ.
Աքաղաղ բայր կատար, տանն փ
յանկիւնն կու կէնայր, երբ առաւօտ
ըն լուսանայր, ջուլահկերուն խա
պար կուտայր հայ.
Արտուտիկն դնէր վէղար, զէրդ ա
բեղայ աղօթարար, յառաւօտէ մինչ
էրիկուն, փառաբանէր զՏ̃րն անդա
դար հայ.
Անծղան ագին էր խիստ էրկար, 'ի
ծա

ծաւէ 'ի ծառ կու՞ պորտքայր, երբոր
լսէր բարի խապար, նա գայր կանչէր
երդիքն 'ի վայր հայ.

Թութակն յամէն դուրպաս կէնայր,
չթողոյր խաթունն որ բողանայր,
զինչոր տէմնոյր կութօնթօրայր,
պարոնն որ գայր կուտայր խապար
հայ.

Ձունձունակն աշունն գայր, և խրա
տէր առհաւասար, թէ շուտ շորէր
ձեզ կարեցէք, և ձմռան ձեզ պատ
րաստեցէք հայ.

Լծէլծէն գարունն գայր, շինակ
ներուն խապար կուտայր, լծէլծէ
կասէր ճարտար, ժամն աղէկէ վարէ
երկար. հայ.

Մանօղակն զերթ զծրար, ու կու
մանէ զերթ մանծարար. շաբաթն 'ի
բունն կուջանայր, եկիրակին մա
նած չիկայր հայ.

Պլպուլն 'ի վարդն կարօտ կայր, որ
պէս սիրէն մարդիք զիրար, իւր ցան
կա

կալըյն միշտ տուփանայր, զերդ սիրոյ
տէր ճանրանահար հայ.

Էզնարօտիկ հաւուկ մի կայր, հետ
ակօսին 'ի շուրջ կուգայր, քաղէր
զցորեանն և կշտանայր, և ձագե
րուն առնոյր գնայր հայ.

Բուին աչքերն էր իփսա տկար, յա
րեգակնէն միշտ վախենայր ինքն 'ի
գիշերն 'ի շուրջ կուգայր, գողն ու
ւազակն իմանայր հայ.

Ցօվանակ հաւուկ մի կայր, զերդ
ցնծզայի ձայնն կու գայր, հագին
տունէր զ շուռջառ դեղին, և միշտ
Ճեմէր 'ի պախչանին հայ.

Սարեկիկն սարսափէր, զերդ զջէր
մօտ կամ զդիւանհար, ԽԵՐ չգուսան
չալփարազան, ինքն զարնէր ինքն
խաղայր հայ.

Պզպեղ անուն հաւուկ մի կայր, և 'ի
Հնդկաց աշխարհ կենայր, զգլուխն
Ծեծէն յերկաթ կքար, իսկի չասեր
Թէ ցաւ կուտայր հայ.

Տաղ

Տաղ վ՟ սիրելոյ եբարեկամի.

Այսօր զքեզ տեսայ եւ ուրախացայ, բարով զար դարեցայ զտ՟նէ փո՟ա ցայ, գալնան վարդի նման քեւ զուարձացայ, այսօր զքեզ տեսայ և ուրախացայ.

Դրախտէն աւետաբեր զքեզ իմա ցայ, երեսդ իվեր նայիլ սիրով կամե ցայ, զարդարեցեր 'ի տունս ամէն ինչ որ կայ. այսօր.

Եկիր հազար բարով աչօք իմ տեսայ, ընդ այդ քո գալստեանդ յոյժ ուրա խացայ, թող դու բազում ապրիս աշ խարհիս վերայ. այսօր.

Ժամանակիս պարծանք եղեր դու հիմայ, 'ի տեսանել ըզքեզ ամէն մարդ ցանկայ, լուսին ես դու բոլոր զիս լուսաւորեա, այսօր զքեզ.

խնդամք ամէնեքեան, զինչ մանուկ
տղայ, մեծամեծք և փոքունք որ աստ
առ իս կայ, տծ քեզ երկար կեանք
և առողջութի տաս. այսօր զքեզ.
Հայի բարի երեսդ ամէն քրիստո
նէայ, ձայնիւ զքեզ երանէ ամէն քա
հանայ, զամբարէս լուսաւոր առ մեզ
լուսծագեմ, այսօր զքեզ.
Ճարտարես դու մտօք հզօր իբր ար
քայ, մարմնովդ ես գեղեցիկ հրեշ
տակ քեզ ցանկայ, յամէն երկիր բո
լոր քո համբաւդ երթայ. այսօր.
Նայեմ առ մեզ սիրով և ընդ մեզ բաղ
մեմ, շրթամբք քո անուշիւք դու առ
մեզ խօսեմ, զի մինչ զքեզ տեսանումք
հոգիս մեր ցնծայ. այսօր.
Զար թշնամին 'ի քէն այսօր հեռա
նայ, պարծանք դու մեզ լինիս աշ
խարհիս վերայ, ջահիւք լուսաւոր
եմ զամէն մերձակայ. այսօր.
Ռաբբի ես բանաւոր քաղցր բարբա
ռեմ, սաղմոսիւք օրհնութե զած

փա

փառաւորեմ, վն մեղաւորիս առ տր
միշտ մաղթեմ. այսօր.
Տեսլեան քո պատկերիդ ես արժա
նացայ, բոտեալ հոգովս 'ի յիս հրճու
եալ բերկրեցայ, ցնծայի խնկապէս
ևկէնդանացայ. այսօր.
Հիւսանդ էի անձամբ քև առողջա
ցայ, փառօք տեսի զերեսդ 'ի խոկ
մանց զերծայ քեզ լինիմ ես փոքրիկ
և յետին ծառայ. այսօր.

### Տաղ հոգևոր ևաղօթական.

Եսեմ կորուսեալ ոչխար
մոլորեալ 'ի տբ քո հօ
տէն, հովիւ քաջ 'ի վայր
հայեաց բարեխօս քեզ
երկիր ամէն.
Զգիւտ կորստեան իմոյ
տեսանել ցանկամ տր իքէն, զի մի
արտաքոյ մնացից 'ի յարկացդ քոյ
լուսեղէն.

Զքո

Զքո ա͞ծային հրամանդ զոր լուայ 'ի
ս͞բ գրգերէն , թէ դառնամ 'ի միւս
անգամ և խառնիմ 'ի դաս լուսեղէն .
Առ իս կատարեա՛ զհրամանդ , զի
ծնունդ եմ աւազանին , տուր ինձ
փրկութե͞ նշան վարդագոյն ար
եամբդ որ 'ի քէն .
Տուր ինձ բնութի͞ բարի կակղացո՛
զսիրտ իմ քարեղէն, տուր ինձ արտա
սուաց վտակ որ կաթէ ցօղիկն 'ի յամ
պէն .
Երբև ըզ աշնան քամի որ թափէ
զտերևն 'ի ծառէն , հողմով մեղա
նաց իմոց զրկեցայ անանց պսակէն .
Ո͞ղ Եղանէ ժամժամ թանձրացեալ
Թուխ ամպն 'ի ջրէն , 'ի յորոտմանէ
նորա սասանի ամէն մսեղէն .
Ո͞ղ որ հանեն մարդիք հնարիւք ըզ
ձուկն 'ի ծովէն , որ պահ մի տատանն
տայ ու մեռնի կարօտ 'ի ջրէն .
Ո͞ղ մինչ գարուն լինի ու ծաղկի
տերևն 'ի ծառին , տ͞ր իմ ծաղկեցո՛

հոգով զիս 'ի սէր քո ա՟ծեղէն .

Գիտեմ տ՟ր քեզ չէ դժուար փարա-
տել զհիւանդս 'ի ցաւէ , ես եմ չարա-
չար հիւանդ իմ կենաց ճարակն է
իքէն .

Ես արտաքսեցայ մեղօք 'ի յանհուն
շնորհաց քո ծովէն , հոգիս թալկա-
ցաւ դէմ քեզ կեցո՛ զիս ծնեալդ 'ի
կուսէն :

Ինձ մութն ու խաւար տիրեց իմե-
ղաց իմ թանձրութ՟էն , գինեմ քո ան-
պարտ արեան հալածեա՛ զխաւարս
'ի յինէն .

Արեգակն է քո ստեղծուած կու լնու-
զաշխարհս ա՟մ , դու ես արարիչ լու-
սոյ մի' թողուր կարօտ զիս իքէն .

Իմ մեղքնէ կամար միգի կուբէր է կար-
կուտ հրեղէն , քանի որ յիշեմ զնա
կուդողայ ոսկերս իմ ամէն .

Աշխարհս 'ի վաճառ եկի շահեցայ
գանձրս հոգեղէն , չար աւազակաց
դիպայ թալնեցին զինչ մերկ 'ի մօրէ .

Շա

Ճատոնց օրինակ եղէ, տալով չար բարուն փոխարէն, վախեմ ես'ի յայնմ օրէն, որ համար ուզէ տ՟րն յինէն.

## Տաղ բարեկամի.

Այէն ասէ առաջեցար հազար բարի, բենն ասէ բարի տեսայ հազար բարի, գեմն ասէ գավաթ խմէ իմ սիրելի. այբն ասէ առաջեցար հազար բա.

Դան ասէ դու սիրեցեր զմեզ ըղձալի, եչն ասէ ելար եկիր առ մեզ հիմի, զան ասէ զմեզ սիրեցեր ով պատուելի, այբն ասէ.

Էն ասէ եկայք առ քեզ հոգով'ի լի, ըթն ասէ ընդ քո տեսլեանդ ուրախալի, թոն ասէ թողդու ալրիս բազում տարի, այբն ասէ.

Ժէ՛ն ասէ ժամանակաց դու գովելի,
Լիւնն ասէ լոյս՛ն երկնային 'ի քեզ
հանգչի, Խէ՛ն ասէ խմէ զկթխայդ թէ
քեզ պիտի, այբ՛ն ասէ.

Ծա՛ն ասէ ծառ այս խմէ գավմաւելի
Կէ՛նն ասէ կարաս բանամ բերեմ գի
նի, Հո՛ն ասէ հոգւով զքեզ սիրել պի
տի, այբ՛ն ասէ.

Ձա՛ն ասէ ձայնիւ գոչեմ քեզ երանի,
Ղատ՛ն ասէ ղամբար վառեաց մեզ դի
շերի, Ճէ՛ն ասէ ճորտ ու ծառայ եմ
զիս արի, այբ՛ն ասէ.

Մէ՛նն ասէ մեծարեցեր զինչ որ չէի,
Յի՛ն ասէ յուսով եկիր առ իս հիմի, Նու՛ն
ասէ նոր կթխայով խմել պիտի, այբ՛ն
ասէ.

Շա՛ն ասէ շուշա՛ն 'ի յիմ ձեռս պիտի,
Ո՛ն ասէ ուստի ծառ այս ուրախ լինի,
Չա՛ն ասէ չար թշնամին ամօթ լինի,
այբ՛ն ասէ.

Պէ՛ն ասէ պատիւ պարտիմ իմ պարո
՛նի, Ջէ՛ն ասէ ջուրն ու գինին շատ

կու

կու լինի , ռա՛ն ասէ ռաբբին երեւ
զքեզ մեզի , այբ՛ն ասէ .
Սէ՛ն ասէ սբ գաւաթով ճաշել պիտի,
վեւ՛ն ասէ վէց վէց ուվէց քիչէ ինձի ,
տիւ՛նն ասէ տուր ինձ խմեմ մէկ քա
նի մի , այբ՛ն ասէ .
Րէ՛ն ասէ րամեալ մարդիքըս սխրալի,
ցօ՛ն ասէ ցնծամք ամէնքս ուրախալի,
փիւր՛ն ասէ փառաւորեմք զՏէ՛րն ամե
նի, այբ՛ն ասէ .
Քէ՛ն ասէ քեզ գոհութի՟ն ա՟ծ բարի ,
Օ՛ն ասէ օրհնեալ անունդ անբաւելի,
Ֆէ՛ն ասէ ֆախիրներիդ գլուխն ա
պրի , այբ՛ն ասէ հատաւ գինին էլու
կորի .

Տաղ սու.կոյսն մարիամ.

Մաքուր տաճար նէ՛նա
կտրան ա՛նմահի անմա
հի , որ մայր եղեր ա՛ն
ճառ. բա՛նին միածնի
միածնի, Նայեմ՛ ՚ի յիտ

քաղցր գինմօք տիրածին տիրածին .
խոցեալ սրտիւ բեկեալ ողբմամբ պա
ղատիմ պաղատիմ, մածեալ ձեռօք
գլխակորեալ հառաչեմ հառաչեմ ,
Նայեա՛.

՚ի յորսորդից յորոգայթից ազատեա՛
ազատեա՛, ուղիղ շաւղօք առաջնոր
դեա՛ աղերսեմ աղերսեմ Նայեա՛.

Թշնամիք իմ հասեալ յետկոյս պատե
ցին պատեցին , յափշտակեալ ՚ի
ձեռն որկին ապրեցո՛ ապրեցո՛. Նայ.

Արտասուաթոռ հեծեծանօք դան
դաղիմ դանդաղիմ, հաս յօգնութի
պաշարելոյս աղաչեմ աղաչեմ . Նայ
եա՛.

Բեննական լուսոյ որդւոյդ հեռացայ
հեռացայ , խաւարասէր իշխանք
մահու տերեցին տիրեցին , Նայեա՛.

Ծափս ընդ ծափոյ հարեալ կարդան
վաշ մեզ հէյ վաշ մեզ հէյ . Զի ընկլու
զաք արագ զնա զօրացո՛ զօրացո՛ ,
Նայեա՛.

Առա

Առասանօք կապեալ ջարշէն ճար
ճատիմ, ճարճատիմ, անօգնական
լեալ յու մէջէ խորտակիմ խորտակիմ,
Նայեմ ի.

Ոտամս չարեաց բոլորապատ կանգնե
ցին կանգնեցին միստ միջէ հարեալ
ոտիւք կոխեցին. կոխեցին Նայեմ.
Արագարագ խողխողեցին խոցեցին,
խոցեցին, տուփեալ ոտիւք կայթեալ
ձեւօք ղօղանջեն ղօղանջեն, Նայեմ.
Յորդահոսիւ արտասուօք փտա
կօք փտակօք, առոտս անկեալ քո
աղերսեմ ողջացո ողջացո, Նայեմ ՚ի
յիսքաղ.

## Տաղ Ննջեցելոց.

Ես գիտէի Թաշխարհս
ինձ մուլք էր տուած, ու
տէի խմէի հետ իմ սիրե
լեաց, յանկարծակի ե
հաս մահն յետևանց,

զի՛նչ խորհուրդ ունէի կիսկատար
մնաց .

Գիտէի թէ բերդ եմ 'ի յայսմ աշխար
հիս , մահուն յաւն պատեաց զբոլոր
մարմի՛նս , շարժեցաւ եփըլաւ իմ բո
լոր պարիսպս , զի՛նչ հասրաթ ունէի
մնաց 'ի սրտիս .

Էրէկ վարդի նման էս կուփայլէի ,
սիրամարգի նման 'ի շուրջ կու գայի ,
'իմ սիրելեացըս հետ զրոյց կու տայի ,
էս այս աւուրս իսկի խապար չունէի .

Ես գիտէի թէ մարդըն չի մեռանիր ,
եաստէնից կենացըս չի բաժանիր ,
աղօթից փոյթ չարի եանհոգացայ ,
յանկարծ մի՛նչ խօսէի էս կարկամե
ցայ .

Էկաւ մութն տիրեաց իմ ծով աչե
րուս , գնաց խելքն 'ի գլխոյս եգոյնն
երեսիս , իմ սիրելի եղբարք ժողովե
ցա՛նյիս , կու հարցանէն կասէն թէ
զմեզ ճանաչես .

Աչերս լոյս չկայ որ տեսանեմ զձեզ ,

լեզուս չի բարբառիր որ զրոյց տամ
ձեզ , այ իմ սիրուն եղբարք հալալ
արէք ինձ , որ կերաք անպակաս ա
ղուհաց հետ ձեզ .

Այս իմ լուսով աչերս էր խաւարե
ցաւ , և իմ ճարտար լեզուս վ̃ռ էր կա
պեցաւ ; մի թէ մեռանելոյ օրս մօտե
ցաւ , և հոգիս ՚ի մարմնոյս բաժնիլ
կամեցաւ .

Ինձի հալալ արէք ով իմ սիրելիք ,
այսօր թէ ես մեռայ դուք այլ տի
մեռնիք , աշխարհս անցաւորէ չինի
թէ խաբէք , մահըն յանկարծ կուգայ
միշտ պատրաստ կացէք .

Դեռ եմ հասեր հօրս մօրս գաւազան
շուտով կու հասնէի ես յ̃մ բան, խոր
հուրդ կու անէին դնելոյ նշան,նշան
ելոյ փոխան դրին գերեզման .

Այսօր կու հեռանամ ՚ի ձեզանէ ես,
՚ի տանց և յընտանեաց կու բաժա
նիմ ես , ՚ի ձեզանէ խնդրեմ չի մոռա
նայք զիս , ասէք մի հայր մեղայ տ̃ն

ողոր

տղորմի ձեզ։
Քան զմահն այլևղի խնկի չկայ վատ
որ կոռ բաժնէ զփեսայն և զնոր հարսն
զատ, Երբ բաժանօղն ած ուժ անեմ
գանկատ, շատ իմաստունք խելօք
կու մնան 'ի մաթ.
Ած մխիթարէ զձօջ իմ սիրելիք, միա
քան ծողովուրդք որք հետ ինձ էկիք,
տայցէ ձեզ տի ած զինչ խնդիր ունիք
հաւասար ծողովուրդք որք դուք զիս
լացիք.
Հոգևոր քահանայք դուք մի ձանձրա
նայք, զերգս բոլոր ասէք և մի նեղա
նայք, և պաշխատանքն ձեր ինձ հա
լալարէք. Ես ձեզնէ հեռ ացայ դուք
բարով կացէք.
Զիմաստէնի հանդերձն յինէն հա
նեցէք, նանտէնի պատանք ինձի
հագուցէք, 'ի հող'ի գերեզման շու
տով իջուցէք, հետ հրեշտակին իմոյ
զիս արձակեցէք.
Երկայն ճանփոյս պաշար պատա
րագա

րագ արէք, անօթք նաղաչանք խն
դրուածք ասէք, ըզ ձեզ կու աղէրսեմ
զխս չի մոռանայք, ըզ կոյսն մարիամ
բարեխօսեցէք.

Տաղ սու գրիգոր լուսաւորիչն.

Ես քո սիրուն չեմ դիմա
նար, իւրէկիմ թութու
շուփ եանար, աք գրի
գոր զիս մի՛ մոռանար,
պէնի տօվլատէն ունութ
մա՛.

Զքեզ հարցայ 'ի վանքն էլայ, աձապ
տուշտում պէն պու հալայ, չի դա
դարիր աչքս կուլայ, պէնի տօ.
Ջանց իմացիր այ իմ եղբայր, կեօ
զումտէն դանլու եա՛շ ախար, քո
քեզու մեզ մխիթար, պէնի.
Եղբայր զայս բանս առա՛ հաւսար,
զասէւէթլէր պէնի պասար, գու քէ
փառքն տէաար. պէնի.

Յոր

Ցորժամ խմես բաժկով գինի , պա-
տարագտէ անկ սէն պէնի , այդքը
բաներդ եղէր ղանի , պէնի .
Ջօրէդ մօրէդ մի բաժանիր , պաշին-
կայ կեօրնէլէր կէլիր , սիրտդ խոցվի
արտասուալիր . պէնի ,
Սրտիկս էլաւ գետի նման , պէնի
պայստի ղարա տուման , մութնու-
խաւար բանտի նման , պէնի .
Ես գնացի օտար աշխարհ , կիւնա
հիմ չօք պաշտան աշար , չունիմ դա
տաստանին պաշար , պէնի .
Աշխարհըս չէ մեզ մնալու , չի դադա
րիր աչքս 'ի լալու , ահա եղայ ես
գնալու . պէնի .
Եղբայր քեզի խրատ մի տամ , կէրէկ
օլայ սանկայ պիր տէմ , աղօթք արա
գայ քեզի դէմ . պէ .
Պիրէ պօղոս պիրէ պետրոս , չեօք
անվտիկիմ սէ սռեփանոս , ղուլ օլայ
իմ սանկայ քս . պէ .

## Տաղ ղարիպի.

Պու տունեանուն օթէսի
եօք, ղարիփլիք տուր
տէմուրտէն օք, մս
ղանտի իւրէկիմ չօք.
օլտում փէրուշան փէ-
րուշան.

Ի յէրկէր օտար հէռացայ, ըզ էիրէ
լիս իմ մոռացայ, իմէջ ծաղկանցն
փառէցայ. եղէ ցաւալից ցաւալից.
Ղարիփլիքտէ տուռայ տուռայ
ախլիմ ալտի պուռայ պուռայ, պիզէ՝
ջտէն հաքտան պուլայ, օլտում.
Անչափ սաստիկ է նըժուար, ղարի
պութին որ չկայ ճար, վկայ է տր եմբ
տաճար. եղէ ցա.
Կէճէ կունտուզ էտէրիմ ախ, մէջ
լամ պանեկայ տէտուրմէ վախ, նազար
էյլէ ղուլլունկայ պախ, օլտում.
Տիւ ազ իշէր ողբայ ելայ, տր իմ ած

ինձ

ինձ ողորմեա՛, ղարիպութենս իմ ճար
արա՛. եղէ.

Քիմի օխուր քիմի եաղար, աղլամաք
տա՛ն օլտում պէզար, սուփհա՛ն ալ
լահ էյլէնազար, օլտում.

Մինչև յերբ լաս աղաղակես, զանձդ
կոծես և հառաչես, ով եղկելի գեմ
ծառայ չես, եղէ.

## Տաղ Թշուառութեան մարդկան.

Ամէն առաւօտ ելոյս, գա
բրիէլն առէ հոգոյս, արի
ել՚ի յայս այգոյս, այս իմ
նորատունկ այգոյս.

Ջարեմ քերեր լեռնէ
րոյր, պատ եմ բոլորեր
այգոյս, դեռ չեմ կերեր ՚ի պտղոյս 5
կասեն թարեկ էլ յայգոյս.

փուշ եմ բերեր ձորերոյս, զմուտն
եմ. փակեր պատերոյս, այս իմ ամ
րակազմ այգոյս, կասեն.

Ջուր

Ջուր եմ բերեր ձորերոյս, զցուրտ
նբարեհամ աղբիւրս, դեռ չեմ խմեր
՚ի ջրոյս. կաս.

Ուռ եմ տնկեր այս այգոյս, բարու
նակն հասեր որթոյս, խաղողն է ող
կոյզ ողկոյզ. կաս.

Հնձան եմ շիներ այգոյս, կարաս եմ
թաղեր խորոյս, դեռ չեմ խմեր ՚ի
գինոյս, կաս.

Տունկ եմ տնկեր նոր պատրոյս, նուռ
և նշենի ընկուզ. դեռ չեմ կերեր
՚ի պտղոյս. կա.

Ծառ եմ տնկեր նշատ բոյս, նա
րինձ և թուրինձ ւայլ գոյնս, միրգ
չեմ տարեր ՚ի շրթունս, կաս.

Վարդ եմ տնկեր այս այգոյս, կարմիր
սպիտակ ւայլ գոյնս, դեռ չեմ հոտ ա
ռեր վարդոյս, կաս.

Ծաղիկ եմ ցաներ այգոյս, ռեհան
մանուշակ սմպուլս, դեռ չեմ քաղեր
՚ի ծաղկոյս. կաս.

Բերէք ինձ մրգաց այգոյս, վարդս

և

նգոյն զ գոյն ծաղկունս , առնում
հոտոտեմանուշ . այլ չէմ ելանէր
այգոյս .
Պլպուլն գոջէ այգոյս , յառաւօտէ
մինչ 'ի լոյս , գաբրիէլն ասէ հոգւոյս ,
Թարէկ էլ 'ի յայս այգոյս .
փըլաւ նորաշէն այգիս , չորացաւ
զինչ տունկ ևբոյս , Թարշամեցաւ
գեղ մարմնոյս . կաս .
Առին զհոգիս 'ի մարմնոյս , լոյսն
գնաց աչերոյս , հանին զիս 'ի ժիմ այ
գոյս , այս իմ նորաշէն այգոյս .

### Տաղ վ̃ս պլպուլի և վարդին .

Յետ գնալոյ վարդին , էկ
պլպուլն այգին , ետես
զթուփ վարդին , ջաղէ
ցաւ հոգին. շրջէր և հար
ցանէր ըզ իւր սիրելին ,
գոջէր ւաղաղակէր ի մէջ
գիշերին .

Այգի ընդ քեզ ասեմ տուր ինձ պա
տասխան , ընդէր ոչ պահեցեր
զվարդն իմ պատուական , որ էր ա
մէն ծաղկանց սալվար ու սուլթան ,
գունովն գեղեցիկ հոտն անմահութե
Ջանկվի ամուր պարիսպդ դառնայ
աւերակ , չորնայ ճուղդ ու տե
րևդ ծառերուդ չիտակ , ամենայն
ոտք խաղայ 'ի քեզ համարձակ , վեր
նայ բոյսն ու բանջարն ւամէն կա
նանչ տակ .

Ակունք յորդախաղաց մի գնայք յա
ռաջ , ծառեր թօթափերէք զ տերև
ձեր կանանչ , խօսիմ պարզ նյիստան
ասեմ անամաչ , քանզի տարան յինէն
զսիրելին իմ քաջ .

Զվարդն իմ յինէն բարձին ւարին
զլիս շուար , առին զ լոյս աչացս տիր
եալ . ինձ խաւար , զտիւ ևզգիշեր
ողբամ միշտ ես անդադար , դարձե
րեմ եղկելի նչունիմ ինձ ճար .

Լինի թէ այգեկործն արար զայս ըն

միս ։ տարաւ ըզվարդն յինէն յաւե
ցոյց հոգիս, այլ զնա չի տեսանեմ զինչ
լինիմ գերիս , փոխան ուրախութե
ողբ առեմ վարդիս .

Վախեմ հողմն սաստիկ շնչեաց ահա
գին , վն այն թօթափեցաւ տերևն
վարդին , և կամ խորշակահար տա
պըն , արևին , եհար թարշամեցոյց
ըզ գեղն նորին .

Կարծեմ եթէ ծաղկունքն արին հետ
ինձ քէն , տարան հեռացուցին ըզ
վարդն իմ յինէն , և կամ կարկուտ
իջաւ սաստիկ ՚ի յամպէն , հար զնա
անողորմ կտրեաց ՚ի թփէն .

Ծաղկունքն ամէն ասին նմա միա
բան , եթէ բնաւ չունիմք ՚ի վարդէդ
կուման , մեզնէ քեզ մխիթարք թը
չունդ աննման , զի գտնուս սիրելիդ
՚ի յայսմիկ գարնան .

## Տաղ վարդապետի.

Պթազեալ սիրով տ̅ր̅ն 'ի
ծնունդսըն ադամայ,
մարմնացաւ 'ի մէջ կուսէն ալէլուիայ.
Ցայտնեաց զփառս իւր
աշխարհի երեւմնամեայ,
եզնախսկլ՞ն 'ի գալըլէոպալէլուեայ.
Զվարդապետն մեծարեցին 'ի հար
սանիս, ուր արար զ ջուրն գինի ալէ
լուեայ.
Ընդորս եւմեք զվեհդ մեծարեմք 'ի
յայս պատիւս, ըստ արժանոյն զի
վայելէ ալէլուեայ.
Միաբան աղաչեսցուք ընդ տ̅ր յ̅ս, զի
տացէ քեզ երկար կեանք ալէլուեայ.
Ընդ երկար կենաց եւ որքութին բոլոր
անձինդ, զի եւ մեզ միջնորդ լիցիս,
ալէլուեայ.
Արդ. որպէս օրհնեայ նա զտունն

Ի ընդ սեղանն, օրհնեա՛ աջու զմեր
բազմականս, ալէլուեայ

Եւ որպէս օրհնեաց զփեսայն աջ
հարսնորին, օրհնեա՛ աջու զմերս
ընտանիս, ալէլուեայ.

Նա բազմացոյց զհինգ նկանակս յա
նապատին, դու ճոխացո՛, մեր զհոգե
կանս, ալէլուեայ.

Զի քո՞յով իմաստութե՞դ և խրատիւ,
զճանապարհ կենաց գտցուք. ալէ
լուեայ.

Եւ ընդ քեզ միահաղոյն վայելեսցուք,
ընդ բարիս անանցականս, ալէլու
եայ.

## Տաղ մեղաւորի.

Զաղէտ եղկելոյս, զողբ
արտասուելոյս, ցաւագ
նեալ սիրտ իմ երգէ՛ ի
սփոփանս հոգւոյս.
Սխրալի որդին, հա
նուրց երջանկին, սի
րա

րա՛նհարեցաւ ՚ի գեղ աղախնոյս ան
ձին .

Զաւէտ հարսնութե̄, զլուր դշխոյ
ութե̄ , դեսպանիւք հիքոյս զեկոյց
յառիթ ցնծութե̄ .

Զապարանսյորդեաց , զգահոյսյար
դարեաց , զառագաստ ողջագուր
ման ինձ վերյօրինեաց .

Զդրունս գանձուց եբաց, ՚ի շնորհս
իմ վառնեաց , զպաճուճանս ականա
կուռս յօժիտ ինձ շնորհեաց .

Զլանջագեղ կամար, զթագ մարգար
տաշար , զմատանին հանդերձ
գնտիւ ականջացսյարմար.

Զանգինս պատմուճանս , զգերս
և պատուականս , ընդ բեհեզս նրբի
րանիս ևզգարպասականս .

Զփեսաւէրսյղեաց , զանձն իմ հրա
ւիրեաց , բայց ես հեղգացայ ՚ի զուր
սիրով զգալեաց .

Իսկ ՚նա գթացաւ , էլ պանդխտե
ցաւ , և եկեալ սիրով ընդդիս միաւորե
ցաւ .

Բայց որք ատեցին, եւ քամահեցին,
Նոյնք զանմեղ սիրելին իմ 'ի մահ
մատնեցին.
Ջայս միշտ յիշելով, եւ հառաչելով,
դեգերիմ յայսմ աշխարհի զանձն իմ
մաշելով.
Մինչեւ սպառ իցիմ, եւ մեռանիցիմ,
եւ հոգւովս ընդ մն իմում միաւորի
ցիմ.

## Տաղ մեղաւորի.

Ըստ պատկերի մն ըստեղ
ծոյ, բայց անձամբ խո
տանեցայ, յանձառ
բարին հրաժարեցայ,
եւ անդ փութալն հեղգա
ցայ, աւաղ աւաղ աւաղ
զանձն իմ աւաղ.
'Ի մէջ դրախտին զետեղեցայ, եւ
բախտնիմ անգիտացայ անմահութե
վիճակեցայ, բայց գթեցմամբ զրկե

ցայ , աւաղ.

Վշտիւք կենցաղոյս պատժեցայ , և զցաւս իմ ոչ իմացայ, ո՞ր գոլով նախ լատրկացայ , աղաւտ գոլով գերեցայ , աւաղ.

Փառօք և պատուօք ծոխացայ , բայց 'ի զուր աղքատացայ , ի՞նչ իմէ հեռացայ , և թշնամւոյն յարեցայ . աւաղ.

Զպատուէր կենաց ոչ ընկալայ . զի ընդգայլեօք հեշտացայ, ճշմարտութե ընդ խմացայ , և յանբանս համարեցայ , աւաղ.

Զերախտիս ո՞ն ոչ խորհեցայ , և ոչ երբէք գոհացայ , աչօք միայն խաւարեցայ , և 'ի ստուերի շրջեցայ . աւաղ.

Պատճոց մեծաց արժանացայ , բայց շնորհիւ աղաւտեցայ , ընդ սոյն դարձեալ ես մոռացայ , և ախտից հետևեցայ . աւաղ.

## Տաղ գարնան.

Հողմն անուշ շնչեաց հարաւուն, աւետեաց մեզ ըղձոր գարուն, կայտռացեալք առ հասարակ ըստեղծուածք յելից արևուն յելից արևուն ծափս հարին մինչ ՚ի մուտս նորուն.

Թանձրամած մէգն հեռացաւ, ամպն խիտ ՚ի բաց մեկնեցաւ, իսկ երկինն աստղապաճուճ ընդ քառից տարերց խնամացաւ, խնամեաց զուգակցմանն ընդհանուր աշխարհ խայտակցեցաւ.

Անդաստանք բեղմնաւորեցան, բուրաստանք գեղապճնեցան, իսկ հովիտք ընդ պարտիզաց պերճացեալք զարդուք բերկրեցան. բերկրման կենդանեաց խսկականք առիթք պատրաստեցան.

Ծառք նտունկք ընձիւղազարդին ,
Խոտք նբոյսք համայնք բողբոջին ,
Իսկ ծաղկունք անուշահոտք վայել
չօք գեղօք պանծանկցին , պանծման
յիմ՛րաց խառնրայցեալք կենօք նմա
նակցին .

Ուռուցմունք ծովուց դադարին ;
սառուցեալք գետք յորդահոսին ,
Իսկ աղբիւրք անմահութե՟ որովք
ցաւք մարդկան փարատին , եղև
ժամբ ՚ի լերինս ընդ ծործորս իջեալք
համազեղին .

Ցեղք սողնոց զգաստացեալք շար
ժին , ազգ զեռնոց զարդեալք ջեռա
նին , իսկ ձկունք երամք երամք ՚ի
ջուրս անդնդոց ծփակցին , ծփմամբ
սողացեալք ընդ ալեաց ծովուն ըն
դիմակցին .

Կենդանեաց բնութի՟ք ըսփոփին ,
անասնոց հօտք մխիթարին , իսկ
գազանք անապատի զերծեալք ՚ի
սովու կերակրին , յորոց գոհութի՟ք

ստեղ

ստեղծողին բնաւից վեր ընծային .
Հոյլք թռչնոց 'ի յօդս պարէն ,
զուարդս ազնիւս համայարմարեն ,
իսկ մարդիք զխրախճան կազմեալք
ի մէջ գաւառից ներբողեն , զգովեստ
համեղի եկարմրոյ գինւոյն զոր վայ
ելէն .

## Տաղ զբօսանաց .

Յաւուր միում որ էր մեզ
Նոր կիրակի , ելեալ 'ի
քաղաքէն ես առանձ
նակի , ըշտապելով
ըշտապելով հազիւ
հասի յայգին , ուր գտի
լայլագին , զքոյրնիմ քաղցրագին .
Իբրև ետես նա զիս իսկոյն բերկրե
ցաւ, առեալ զողջոյն սիրոյ մխիթարե
ցաւ , ծիծաղելով ծիծաղելով, եբեր
զսափոր գինւոյն , առ ոտս վարդե
նւոյն , եխնձորենւոյն .

Իբրև

Իբրև ես ըմպէի և խրախճանայի, առ-
եալ ըզհոտ ծաղկանց զուարճանայի,
յանկարծակի յանկարծակի, լուայ
զերգս թռչնոց, համաձայնեցելոց,
՚ի միջոյ ծառոց.

Ընդ որս ձայնակցեցեալ և ես գոչէի,
ըզքոյին իմ՚ շնորհալից գովաբանէի,
ծափս հարեալ ծափս հարելով,
մինչև խառն կազմեցաւ, սեղան պատ-
րաստեցաւ, և զարդարեցաւ.

Նստեալք զայս մանկունհեացն որք
շուրջանակի. փութացին քնարիւ-
առ մեզ շեշտակի, կաքաւելով կաքա-
ւելով, իբրև զպարս աղաւնեաց,
մաքրոց նկաշէլեաց, ՚ի մէջ ՚նունե-
նեաց.

Յետ ըմման խրախճանին եղեալք
շրջեաք, զպարն առեալք ընդ մի-
մեանս հեզաբանեաք, զուգանկեանկի
զուգանկեանկի. սոտնիւ զմայլեցելով.
զհոգս ՚ի բաց ընկեցելով. նմուանա-
կով.

## Տաղ զղջման.

Առոտս անկեալ կենարարիդ թախանձանօք աղաչեմ, ներել իմում թշուառութես արտասուագին աղերսեմ, ունայն գտեալ զիս 'ի յարդեանց զքոյդ օգնութի միշտ հայցեմ. զի զքեզ փրկիչ և ըսփոփիչ հոգւոյ իմոյ ճանաչեմ.

Առանց քոյոյ նպաստութե յա̃մի տկար եմ. առ երկնայինս և հոգէկանս զիս ուղղելոյ անկար եմ. հաստեա̃ խնդրեմ զիս եղկելիս քան զի գիտես անճար եմ. զինազելոյդ իմ յիսուսի ծառայ միշտ անյարմար եմ.

Զթշուառութի բնութես իմոյ ճանաչելով մարմնայար. զպատիժ նախնոյն յանձնառնողիս խնայեալ իգութ շարժեցար. ճոխացուցեալ

զտնան

զտնանկութիս աղքատօրէն դու
ծընար , և բառնալով զցաւս իմ եզ
կիրս վ͞ս իմ ’ի սպանդ վարեցար.

Զմկրտութե ըն ͞սբ խորհուրդ դեղ
կենաց ինձ շնորհեցեր , զապաշխա
րութի ինձ յօժանդակ խոհեմաբար
կարգեցեր. զանձըն քո ս͞բ պատարա
գեալ հօր ’ի խաչին ընծայեցեր. և
ըզ գերիս ախտից մեղաց ընդ նմին
հաշտեցուցեր.

Իսկ ես յիմարս և անիմաստ զքոյս բա
րիս զանց առնելով. դեգերիմ միշտ
’ի կենցաղումս զկարեաց մարմնոյ
խորհելով, ցաւ իմ սակայն և տառա
պիմ զիմս սխալանս նկատելով. ցօ
ղեմ զարտօսր զցայգ և զցերեկ զքա
ղցր բնութիդ յիշելով.

Արդ ’ի մեծի քում ատենի յորժամ
զաշխարհ դատիցես . դու սրբութի
գոլով սրբոց զիս ընդ օդեաց դասի
ցես ’ի կիզմանէ հրոյն բոցոյ շնորհիւ
քով ազատիցես . և ընդ օրհնեալս ’ի

յօժարամիտս հօրքոյ զիս հրաւիրիցես .

## Տաղ վ՛կանոտեաց վարուց մարդկան .

Ս ը՛նդ ձեզ գոլով եղ
բարք խրախճանակից.
և ձերոց ուրախութեց
ըն մամնակից. զխղճու
թի մահկանացուաց
դսթովելով ձեզ ճառե
ցից . և զվախճան նոյին թշուառ ձեզ
պատմեցից .

Ո՛չ հպարտ գոլով թուուցեալ միշտ
ոըլանայ . և յինքեան գոռոզացեալ
մտաւ փքմանայ . գերագոյն քան
զայլ մարդիս զինքն վարկեալ յիմա
րանայ . և զըկեալ 'ի սիթելեաց վատ
թարանայ .

Ո՛չ հաշեալ 'ի նախանձու միշտ
պապակի . կորուսեալ զհանգիստ
մտաց միշտ տագնապի . հտենչաց